

ԻՏԱԼԱԿԱՆ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱՐՏԱՅՈՂՈՒՄԸ
«ԱՐԵՎՄՈՒՏՔՈՒՄ»

Պատմ. գիտ. թեկնածու Մ. Ն. ՀԱԿՈԲՅԱՆ

Ստեփան Ոսկանյանը (1825—1901) գրել է. «Ո՛ր և գտնվինք աղատութ-
յան հետ պիտի մնանք և բռնությունը չպիտի սիրենք երբեք թե՛ հայերուն
և թե՛ օտարներուն մէջ: Մեզի համար աղատությունն ղուրս լուսավորություն
չկա»¹:

Իր ժողովրդի աղատությանն ու լուսավորությանը զինվորագրված գոր-
ծիչը շէր կարող անտարբեր դիտողի դերում հանդես գալ, երբ իտալական ժո-
ղովուրդը 1859 թ. աղատագրական պատերազմի ելավ Ավստրիայի դեմ: Ոս-
կանյանի «Արևմուտքը», որ հրատարակվում էր Փարիզում (1859, 1864—
1865), հիմնականում գրական-հասարակական հանդես լինելով, քաղաքա-
կան իրադարձություններն արտացոլելու, առավել ևս մեկնաբանելու իրա-
վունք չունեի: Եվ ահա, երբ 1859 թ. ապրիլից սկսվեցին պատերազմական
գործողությունները, Ոսկանյանը շտապեց հանդեսի ֆրանսիացի «համարա-
տու Տըլիգրի» միջոցով արտոնություն ձեռք բերել «քաղաքական մանր լուրեր
տալու և պաշտոնական գրվածները, որք պիտանություն մ՝ ունին, թարգմա-
նելու» (էջ 121):

Քաղաքական լուրեր և պաշտոնագրեր տպագրելով, Ոսկանյանն, ան-
շուշտ, նպատակ ուներ բավարարելու «Եվրոպայի լուսավորության» արձա-
գանքը հանդիսացող իր հանդեսի ընթերցողների պահանջը: Սակայն նրա
համար գլխավորն աղատագրական պայքարի գաղափարախոսության արժար-
ժումն էր՝ խնդիր, որը նա մասամբ կարող էր իրագործել ստացած արտոնու-
թյան շնորհիվ: Իտալիայի մղած աղատագրական պատերազմը, իրոք, լավա-
գույն առիթ էր հայ ազգային-աղատագրական պայքարի խնդիրները թեկուղ
որոշ չափով լուսաբանելու համար²: Այսպիսի պնդման իրական հիմք են
«Արևմուտքի» մայիս—օգոստոս ամիսներին հրատարակված վեց համարները
(№№ 10—15)՝ հիմնականում նվիրված պատերազմական գործողությունների
լուսաբանմանը, և Ոսկանյանի նշանակալից հետևյալ խոստովանությունը՝
արձանագրված հանդեսի օգոստոսի 15-ի համարում, պատերազմն ավարտ-
վելուց հետո (երբ դադարում էր նաև «Արևմուտքին» տրված ժամանակավոր
արտոնությունը). «Ուրիշ նպատակով այս թերթը շարագրելու հանձն առինք,
և պատերազմին տիեզերալուր շփոթը ու ոաղմական շառաչյունը միայն ստի-
պեցին զմեզ մայրաքաղաքիս օրագիրներու արձագանք ըլլել և մեր ընթեր-

¹ «Արևմուտք», 1 սեպտեմբերի 1859, № 17, էջ 132: Այսուհետև այս աղբյուրից քաղված
մեջբերումների էջերը կնշվեն տեքստում, փակագծերի մեջ:

² Շոշափվող թեմային են նվիրված Ա. Ս. Բաբայանի՝ «Իտալական աղատագրական շար-
ժումները և հայերը» և Հ. Ա. Ասմարյանի՝ «Իտալական ազգային-աղատագրական շարժում-
ների արձագանքները հայ պարբերական մամուլում (1850—1870 թթ.)» հոդվածները («Պատ-
մա-բանասիրական հանգես», 1971, № 3, 1979, № 2):

ցողներու ուշադրությունը դեպի Իդալիա տանիլ: Հազիվ թե մեկ երկու հոգի հասկցան, թե ի՞նչ ըսել ուղեցինք և ի՞նչ ըսինք: Հայ ժողովուրդին վիճակը չէր ներեր, որ ընդհանուր քաղաքականության վրա գրեինք, և մեր արտոնությունը կստիպեր, որ թարգմանենք և ո՛չ թե մեկնություն տանք դեպքերուն: Եթե երբեմն երկու թարգմանության մեջ տեղը ազատաբույր ակնարկություն մը սպրդեցավ կամ Ավստրիայի դեմ սաստիկ բառեր տեսնվեցան, պատճառը մեր անբուժելի հայրենասիրության պետք է որ տրվի» (էջ 121): Ակնարկը պարզ է, խոստովանությունը՝ անկեղծ. Ոսկանյանը ժողովուրդաստան-հրապարակախոսական եղակի վարպետությամբ օգտվել է ձեռք բերած արտոնությունից և ենթատեքստում հանդեսի ընթերցողներին ասել այն, ինչ նա իրավունք և հնարավորություն չունի բացահայտ ձևով գրելու «Արևմուտքում», պրոպագանդել է այն «միտքը», զաղափարը, որ նա հետապնդում էր:

Ոսկանյանը լավատեղյակ էր Բուլղարիայի պատմությանը, քաջ գիտեր նրա մշակույթը, հաճախ էր դիմում իտալացի գրողներին, նույնիսկ նրանց խոսքերն այլափոխելով հասցեագրում Հայաստանին ու հայ ժողովուրդին: Դեռ 1855 թ. «Արևելքում», շեշտելով, որ նա 7—8 հարյուրամյակ «անգութ և անողորմ» հալածվում է, Ոսկանյանը դիմում էր «նշմաբխ ազգասերներին»՝ ասելով. «Ի՞նչ. մի՞թե այն աստիճան ինկանք, որ իդալյան մատենագրի մը խոսքը կրկնելու անգամ արժանի չենք. «Ենք գերի, այո՞, այլ գերի միշտ զժկամակ»³: Ավելի ուշ՝ 1864 թ., նա Դանթեի խոսքերը վերահասցեագրում էր Հայաստանին: Մի այլ առիթով նա Բուլղարիային ուղղված խոսքերը նորից կրկնում է Հայաստանի հասցեին՝ «Երկիր, ուր որդիք ա՛լ նախահարց արյուն չունին»⁴: Դատելով Ոսկանյանի «Հայ դուցազնուհի մը» պատմվածքից, որի երիտասարդ հերոսը, ինչպես ենթադրում է Լեոն, ներկայացնում է հենց իրեն⁵, 1846 թ. Զմյուռնիայից Ֆրանսիա մեկնելիս Ոսկանյանը եղել է Իտալիայում և շրջապակի երկրում (էջ 22):

Բուլղարիայի նկատմամբ Ոսկանյանի վերաբերմունքն ավելի ջերմ արտահայտություն է ստացել զեռ 1849 թ., երբ նա մասնակցել է հեղափոխական շարժումներով բռնկված ու հանուն իր ազատագրության ոտքի ելած իտալական ժողովրդի պաշտպանության համար Փարիզի ուսանող երիտասարդության հակապապական և հակակառավարական խաղաղ ցույցին, այն էլ որպես զրոշակակիր: Այդ ցույցը ճնշվել և ցաք ու ցրիվ է արվել կանոնավոր զորքի միջամտությամբ: Ստ. Ոսկանյանը հետապնդվել ու մոտ երկու ամիս մեկուսացվել է բանտում, ապա և ստիպված է եղել թողնել Ֆրանսիան: Տասր տարի անց, ընդունելով իր «հանցանքը» և պատասխանելով հակառակորդներին, այդ մասին նա հպարտությամբ գրել է. «Հռոմայի դեմ պատերազմին ժամանակը՝ բազմաթիվ ուսանողը... Սահմանադիր ժողովին աղերսագիր մը տալու որոշում ըրին: Այս աղերսագիրը համեստ բողոք մը կպարունակեր Ֆրանսայի տերության արտաքին քաղաքավորության դեմ... Աղերսագիր տանող բազմության զրոշակիրը մեր բարեկամների մեկն էր, և որովհետև իրեն բով կպտնվեինք, վայրկյան մը զորոշ մեր ձեռք անցավ

³ «Արևելք», 15 դեկտեմբերի 1855, № 12, էջ 357—358:

⁴ «Արևմուտք», 15 մայիսի 1864, № 8, էջ 59:

⁵ Նույն տեղում, 1 հունվարի 1865, № 10, էջ 75:

⁶ «Մուրճ», 1901, № 12, էջ 160:

շփոթին մեջ և կարող եղանք դաշն պաշտպանելու... Տասը տարի անցան այս փոքր ղեկավարները վրա և դեռ այսօր զղջում մը չենք զգար մեր ըրածին» (էջ 132)։ Պատասխանելով նույն հակառակորդների հարձակումներին, Ոսկանյանն այնուհետև ազդարարել է. «Զիդալիա կսիրենք, միշտ սիրելու ենք. Իդալիա իր արջունաթաթով ճակտով միշտ ելևած է մեզ իբրև կենդանի պատկեր նկուն ազգերու... Հայաստանի ավերաշրջաց վիճակը իր զավակներու վրա պարտք կդնե թշվառ ժողովուրդներու կարեկցիլ։ Նկուն ազգերը մյուս ազգերու համակրությամբ միայն կրնան վերականգնիլ» (էջ 132)։

Մտավոր այս լիցքը և գաղափարական համոզվածությունը, որ, անշուշտ, տարիների խմորումների արդյունք են, այն հիմքն էին, որի վրա խարսխվում էր խտալական ազատագրական պատերազմի ուրույն լուսաբանումը «Արևմուտքի» էջերում։

«Արևմուտքի» պատերազմական «շեղոք» լուրերն ուրույն իմաստ ու բովանդակություն ունեն։ Նկատած պատերազմը դիտարկելով միմիայն Խալիլայի միավորման ու ազատագրության առումով, Ոսկանյանը հենց առաջին հաղորդումներից մեկը մեկնաբանելիս հաստատուն կարծիք է հայտնում. «Վալիյան մը չենք տարակուսիր և հառաջմե կըսենք, որ քիչ ատենեն Իդալիան իսպառ պիտի ազատի օտարին անտանկի լուծեն» (էջ 76)։ Ռազմաճակատ մեկնող ֆրանսիական «օրինավոր կամ կամավոր զինվորներին» ճանապարհող խանդավառ բազմության մեջ գտնվելով, Ոսկանյանը կայարանում ականատես է եղել այն «աննկարելի զվարթությանը», որով ֆրանսիացի ռազմիկները «ի մահ կդիմեն տկար, բայց ազնիվ ազգ մը գերութենեն ազատելու համար»։ Նա թարգմանում է բազմության ողջերթի երգի երկտողը՝ «Օ՛հ երթանք առաջ, ուրախ և միշտ քաջ»։ Տեսածն ու լսածն ընթերցողին հաղորդելով, Ոսկանյանը դիմում է օտար թերթիներին, քաղում-թարգմանում հարկավոր նյութերը և դրանք մեկնաբանում «Արևմուտքում», անվերապահ համակրանք դրսևորում խալական ժողովրդի նկատմամբ։ Նա իր պարբերականում ուղղակի հանդես է գալիս որպես խալական ազգային-ազատագրական պայքարին նվիրված մարտիկ-հրապարակախոս։

Ահա ինչպիսի պաթոսով է Ոսկանյանը վերարտադրում Խալիլայում տիրող իրադրությունը. «Ամեն սիրտ հրաբուխ կտրեր է, ամեն մարդ մահճի աչք կառնու և ի սեր ազգին արջուն թափելու համար, ազնվական և շինական պունդ-գունդ կուղղին և դեպի Սարտենիա կվազեն կամավոր զինվորներու բանակը պորացնելու միտքով։ Երբեք չհիշվիր այսպիսի տոհմային աշխույժ և նվիրական սեր մը անկախության և միության համար։ Գարիպալտի գործողություն կհրամայե անոնց և իր փորձառու քաջությունը այսպիսի վստահություն կուտա երիտասարդ խալացիներու, որ ամենքն ալ անմոռն հանձն կառնուն իր կամքը կատարել մինչև պատերազմին վերջը։ Հարուստի զավակները, որք զենք մը շարժել չէին գիտեր և որք հեշտության կյանք կվարեն, հին զինվորի արիությունը և ժուժկալությունը կհայտնեն, այնքան իրավ է, որ ճշմարիտ հայրենասիրությունը մարդս դյուցազն կընե»։

Այդ տողերը Ոսկանյանը եզրափակել է ոչ պակաս նշանակալի խորհրդածությամբ. «Խալացի՛ք, աշխարհիս ցույց կուտաք, որ մի և անկախ հայրենիքի արժանի եք. պիտի հիշվիք դուք իբրև օրինակ և ձեր անունը կիսամեռ ազգերու սիրտը պիտի բշչկե։ Փառք ձեզի...» (էջ 77)։ Այսպես գրելով խալացիների մասին, հրապարակախոսը միաժամանակ իր խոսքն ուղ-

ղում է «կիսամեն ազգերին», նրանց թվում նախ և առաջ հայ ժողովրդին, որի համար իտալացիները պետք է օրինակ ծառայեն և որը պետք է սփռվի ու մխիթարվի՝ տեսնելով օտար բռնակալական լծից մի այլ ժողովրդի ազատագրվելը⁷։ Հայ ժողովուրդը, իր հաղորդումների ենթատեքստում և պատերազմական լուրերի պարբերաբար տպագրությամբ ասում էր Ոսկանյանը, պետք է հետևի այն ամենին, ինչ կատարվում է Իտալիայում, այն պայքարին, որը նրա համոզմամբ պիտի ազատագրություն բերի «օտարին անտանելի լուծեն»։

Վերը բերված հաղորդումն «Արևմուտքում» տպագրվել է «Պատերազմական լուրեր» խորագրի տակ, 1859-ի մայիսի 15-ին, երբ նոր էին ծավալվում մարտական գործողությունները Այնուհետև այդ խորագիրը հանդեսում երեկվաց ևս մի քանի անգամ։ Դրան զուգահեռ «Արևմուտքում» հրատարակվել են խմբագրի ինքնուրույն մի շարք մեկնաբանությունները, պաշտոնական հաղորդագրություններ դաշնակից իտալական և ֆրանսիական բանակների հաղթական գործողությունների մասին, դանազան զեկուցագրեր, ավստրիական բանակի բարբարոսություններն ու ծանր պարտությունները ներկայացնող նյութեր, թագավորների ու զորահրամանատարների կոչերը, այլ վավերագրեր ու թղթակցություններ։ Ամբողջությամբ վերցրած դրանք բավարարողափառ են տալիս եռամսյա պատերազմի մասին։ Ըստ որում «Արևմուտքում» Ոսկանյանը տեղ է տվել, ինչպես նկատել է ակադեմիկոս Ա. Կարինյանը, «ոռոշ նպատակով ընտրված» նյութերին⁸, բայց և միաժամանակ հանդես է բերել հրապարակախոս-խմբագրի իր ոռոշակի վերաբերմունքը՝ այլաբանական եղանակով պրոպագանդելով ազգային-ազատագրական պայքարի գաղափարը, հնչեցրել այդ պայքարի կոչեր։

Ոսկանյանը համակրանքով է արտահայտվում այն մասին, որ Տոսկանայի ժողովրդի ճնշման տակ երկրից հեռացել է մեծ զուբսը. նա «սահմանափակ և անարժանապատիվ մեջ և ջանք մը չունենալով ազգային ազատագրության ձեռնտու ըլլալ»։ «Բարի ճանապարհ», — հումորով նկատում է «Արևմուտքի» խմբագիրը, հույսեր կապելով հորը չհետևելու հույսեր ներշնչող՝ նրան փոխարինած որդու հետ։ Մյուս կողմից նա ծաղրում է ավստրիական բանակի գործողությունները, մերկացնում ու դատապարտում զինվորների բարբարոսությունները։ Իր հանդեսի միջոցով Ոսկանյանը գերազանցապես Թուրքիայում բնակվող ընթերցողների մեջ ձգտում էր արթնացնել ազատագրական պայքարի և ազգային միավորման գաղափարը։

Ոգևորիչ էին Ֆրանսիայի անունից ազդարարված խոստումները՝ «ձեռնտու և մարտակից պիտի ըլլանք ժողովուրդի մը, որ իր անկախությունը կխնդրե, և պիտի ազատենք զանիկա օտարին բռնությունեն», որոնք դրոշմվեցին «Արևմուտքի» հերթական համարի առաջին էջում։ Նմանօրինակ հավաստիացումները հաճախ ուղեկցվում էին պատմության թողած նվիրական հիշատակների ոգեկոչումներով։ Օրինակ, հատկանշական է, որ Իտալիայի ազատագրության և անկախության համար պատերազմող ֆրանսիական բանակը

⁷ Նույնանման մոտեցում էր դրսևորում և զուգակշիռ կատարում հայ և իտալական ժողովուրդների միջև նաև Մ. Նալբանդյանը՝ 2. Սրվաճյանին 1860 թ. վերջին գրած նամակում (տե՛ս Երկրի իրակատար ժողովածու, հատ. 4, Երևան, 1945, էջ 82—86)։

⁸ Ա. Բ. Կարինյան, Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության, հատ. 2, Երևան, 1960, էջ 472։

«Արևմուտքում» ներկայացվում է որպես Ֆրանսիայի հեղափոխական անցյալի և ավանդույթների կրող: Ոսկանյանն ուղղակի գրել է. «Ֆրանսայի զավակը դրոշակակիր է ոչ միայն իր, այլև տկարներու իրավունքին և անկախության: Հեղափոխության սուրբ ավանդություն մ' է այս և Ավստրիայի կողմնակիցներու շոնչյունը վախ չկրնար տալ թուրու այն հարց, որք եվրոպայի հաղթեցին թեպետ և՛ բոկոտն, և՛ անոթի»: Բաղմակետով ավարտելով իր այս խոսքը, Ոսկանյանն անմիջապես բերել է «Մարսելիեզի» տողերը. որոնք լրացնում են հեղինակի միտքը (էջ 102)⁹: Ակնարկելով պատմության նվիրական հիշատակները, Ոսկանյանը կողմնակի ձևով հայ ընթերցողին կոչ էր անում արժանի լինել իր նախնիների փառքին ու հիշատակին:

Թե՛ իտալացի և թե՛ ֆրանսիացի ղինվորներին ուղղված նմանօրինակ կոչերը Ոսկանյանը շեշտում էր նկատի ունենալով, անշուշտ, որ հայ միտքն ու սիրտը պատրաստ էին դրանց արձագանքելու համար: Հազիվ թե որևէ հայ հայրենասերի սրտում արձագանք չգտնեին Իտալիայի ազգային հերոս Գալիբալդիի հետևյալ խոսքերը, որ թարգմանվել ու ղետեղվել են «Արևմուտքում». «Մեր պարտքն է քսան սերունդներու եղած ոտնահարության, նախատիներին, ստրկության վրեժը խնդրել: Մեր պարտքն է այսօր թողուլ մեր զավակներու ժառանգություն մը բոլորովին անբիծ օտար ղինվորին լուծեն» (էջ 90):

Միանգամայն որոշակի նպատակով Ոսկանյանը ձգտում էր կոնկրետ դեպքերի ընթացքը շաղկապել յրատմական իրողությունների հետ, ապա և բանաձևում էր իր հետևությունը: Սուֆերինոյի մոտ 1859 թ. հունիսի 24-ին տարած խոշոր հաղթանակի առթիվ նա ընթերցողին հիշեցնում է, որ անցյալներում, մասնավորապես 1796-ին, ավստրիական բանակը ծանր պարտություն էր կրել հենց նույն ռազմադաշտում: «Ծափ դարնելով», նա հիշեցնում է հայտնի ասույթները. «Որդիք կգտնեն հարց շավիղը», «Ուր հայրը հաղթեց, որդին ևս կհաղթե» կամ՝ «Որդին հորեն շատ շտաբերիր» (էջ 111, 118): Ոսկանյանը հարկ է համարում հատուկ հաղորդում ղետեղել ռազմի դաշտում ընկած հերոսներից մեկի թաղման մասին, շեշտելով այն գաղափարը, թե ընկածներն անմահանում են, իսկ նրանց հիշատակները «պիտի բորբոքեն ուրիշ հայրենասեր հոգիներ» (էջ 119): Պատերազմական հաղորդագրությունների շարքում Ոսկանյանի «Արևմուտքը» մասնավոր տեղ է հատկացնում հույն կամավորների և քաղաքային բնակչության մարտական պատրաստակամության, իտալական վտարանդիների վերադարձի ու ղինվորագրվելու մասին պատմող լուրերին: Եւ նույնիսկ քննադատում է առանձին տերություններին, որոնք անտարբեր են Իտալիայի ազատագրության հանդեպ:

⁹ Ավելորդ չէ նկատել, որ հետագայում՝ 1864 թ. մայիսին, նորից հրատարակվող «Արևմուտքում» մեկնելով երգի նշանակությունը, Ոսկանյանը մասնավորապես շեշտել է, որ այն միավորում է մարդկանց. «Ֆրանսայի զավակները Մարսելիեզը մեկ բերանով երգելու ժամանակ այն համամիտ նվիրումը ղգացին, որն որ ղիրենք բոպիկ, անոթի և ղրեթե անղեն կատաղի թշնամիներու ղեմ տարավ և հայրենիքը աղատեց» («Արևմուտք», 1 մայիսի 1864, № 7, էջ 54): Այլ գրելով, Ոսկանյանը փափագում էր, որ երգն ու երգելը արմատավորվի հայ կենցաղում ու կյանքում, որովհետև «երգող աղերս միտքի բարակություն ունին, վասնղի սիրտով արթուն են և տրամության թանձր մշուշով ղեն պաշարվիր իսպառ»: Հայոց երգարան ստեղծելու և «աղգի սրտի ու հոգու ղխվածքը» երգով արտահայտելու խնդիր էր առաջադրում Մ. Նալբանդյանը՝ «Մեծկաշարցուկում» (Մ. Նալբանդյան, ԵԼԺ, հատ. 1, Երևան, 1979, էջ 295 և 305):

Այս կարգի լուրերը, Ոսկանյանի կարծիքով, ինչ-որ բան պետք է հուշերին հայ ընթերցողներին, շոշափերին նրանց արժանապատվությունը, մտածելու առիթ տալին։ Ուշագրավ է, օրինակ, նրա մեկնաբանությունն այն կապակցությամբ, որ Միլանի քաղաքապետարանը դիմել է թագավոր Վիկտոր-էմմանուելին և կայսր Նապոլեոնին Սարդինիայի թագավորության կազմի մեջ ընդգրկելու խնդրանքով։ Ոսկանյանը միավորվելու այդ ձգտումը համարում է «հայրենասիրության մեծ նշան», հույս է հայտնում, թե այդ օրինակին կհետևեն նաև մյուս քաղաքները՝ «երկպառակությունը և տեղական նախապաշարումը խեղդելով իրենց սրտի մեջ»։ Իր հրապարակախոսության մեջ էական տեղ հատկացնելով ազգի միավորման գաղափարին, պայքարելով հայ դանդաղածների ուժերը ջլատող երկպառակությունների դեմ, հանդեսի խմբագիրը գտնում էր, որ ազգային առաջընթացի համար հարկավոր է իսպառ վերացնել ներքին հակասությունները։

Եվ ահա, օգտվելով ներկայացած կոնկրետ առիթից և ընդհանրացնելով՝ փաստը, Ոսկանյանն իր խոսքն ուղղում է արևմտահայ զանգվածներին. «Անհնարին է, որ ազգ մը կանգնի և օտարի լուծեն իսպառ աղատի միություն կամ դաշնադրություն չհաստատելով իր հողին վրա» (էջ 102)։ «Միությունը կընե զորություն», — հիշեցնում է Ոսկանյանը և շարունակում, — «և դաշնադրությունը կշինե կապ անխղիւ։ Դաշնադիր բազմությունք միասեռ ազգի շափ կրնան զորանալ, եթե դաշնադրությունը հիմ ունի վեհ տեսիլ մը։ Թող իդալիանք իրենց երեք գույներու (իտալական եռագույն դրոշմ—Մ. Հ.) վրա շորրորդ կամ հինգերորդ գույն մը ավելցնեն, եթե կփափագին, բայց ազգություն և հայրենիք գտնելու համար կստիպվին մեկ դրոշ ունենալ և անոր վրա գրել. Աղատություն։ Ժողովուրդ մը, որ ուխտ կընե աղատության ծառայել, անմեռ է ասոր պես։ Աղատությունը կնմանի այն հյութի, որ ապականությունն կպահես դիակը։ Մարդուս կամ մարգերու բազմության սիրտը այս հյութը ունենալով կրնա ամեն արտաքին բռնությունները արհամարհել...» (էջ 102)։

Հաղորդվող ինֆորմացիան իր մեջ ներարկված տրամաբանական բովանդակությամբ և այդ առթիվ հրապարակախոսի արտահայտած մտքերը հայ իրականության մեջ ստանում են մի այլ բովանդակություն։ Այս դիտակետից քննելով Ոսկանյանի «լուրերը» և արտահայտած մտքերը, գրեթե շոշափելիորեն ակնառու է դառնում նրա «գաղտնի» նախատակը՝ իտալացիներին հասցեագրված խոսքով հայ ընթերցողին ասել այն, ինչ հնարավոր չէր բացարձակ ձևով գրել ու տպագրել գերազանցապես Թուրքիայում տարածվող հանդեսի էջերում։ Այլ դեպքում հաղիվ թե անհրաժեշտություն կար, մոտ մեկ ամիս ուշացումով թարգմանաբար հրատարակել Դարիբալդիի կամ Վիկտոր-էմմանուելի ճառերն ու կոչերը։ Բայց դրանք հայ ընթերցողին ներկայացվելով, «Արևմուտքի» էջերում նոր հնչեղություն էին ստանում և դառնում անհրաժեշտ գաղափարներ պրոպագանդելու միջոց։ Լոմբարդացիներին ուղղված Վիկտոր-էմմանուելի կոչի միջոցով, օրինակ, Ոսկանյանն արժարժում էր «ազգային իրավունքի նորոգման», «ազատ և հարատև իշխանության» հաստատման գաղափարը, ցույց տալիս, որ «դարերով վիշտ կրելե և տքը» միայն պայքարով կարելի է նվաճել կորցրած իրավունքն ու պետականությունը։

Արձանագրելով այն փաստը, որ տասներեքամյա տիրապետությամբ Ավստրիան իր «անողորմ բազուկով» ճնշել է ամեն ինչ, բայց իտալական ազգային ոգին մնացել է անընկճելի, Ոսկանյանը որոշակի նպատակով ընդգծել

է. «Այս հոգևոր արիությունն է, որ հիմա իդալաններու այնքան հույս և պնդություն կուտա օտարին դամ զինելու համար: Որչափ որ այս արիությունը պահվի ազգության մը մեջ՝ վտանգե մը վախ չկա, վասնորի ամեն մարդու սիրտը փոքր հայրենիք կդառնա և անկախության սուրբ ավանդը կկրե մինչև հալածության օրը» (էջ 87): Տարիներ անց՝ 1865-ին, դարձյալ «Արևմուտքում», Ոսկանյանը գրում է. «Ստրկության որս է այն մարդը կամ ժողովուրդը, որ բարոյական արիություն չունի»¹⁰, իսկ Նալբանդյանը «Հյուսիսսփայլում» վճռաբար նկատում էր. «Ողջից վատ է կամքի մեռանելը, քնելը և վհատելը կամ ամենևին չլինելը»¹¹:

Ոսկանյանն «Արևմուտքի» յուրաքանչյուր համարում, իսկ շատ համարներում էլ մի քանի անգամ «ընթերցողներու առջև դնում» է «հրաբուխ ազգասիրությամբ» տողորված Գարիբալդիի ու Վիկտոր-էմմանուելի հայրենասիրական, պայքարի մղող կոչերը, ինչպես և հաղորդումներ նրանց մասին: Նպատակը պարզ է՝ ցույց տալ ոչ միայն այն ոգևորությունը, որով համակված է աղատագրության համար մարտնչող իտալական ժողովուրդը, այլև տարածել այն հույրը, այն ոգին, որ ոտքի է հանել օտար կրնկի տակ հալածվող ու ճնշվող ժողովուրդին: Ըստ այդմ հատուկ շեշտվում էր, որ փոքր ազգը դառնում է անընկճելի, երբ «ազգային իրավունքի համար» մարտնչում է խոր հավատով ու համոզմունքով, իսկ նրա բանակը «փառք և գովեստ կշահի», անպարտելի կլինի, քանի դեռ «զինվորին գլխուն վրա դրոշ կա և ետևը ազգ» (էջ 103):

Արևմտահայության աղատագրության գաղափարով տողորելու սկեռուն նպատակն «Արևմուտքում» երբեմն դուգակցվում է կոնկրետ և շափաղանց ներգործուն օրինակների ընդգծված պրոպագանդին, որով աղատագրական պայքարի դասեր էին մատուցվում, այլաբանորեն ասվում էր, թե ինչպես պետք է դործի իր իրավունքները վերահաստատելու համար պայքարի ելնող ժողովուրդը: Հայ զանգվածներին, օրինակ, հաղորդվում է, որ Տոսկանայում ժողովուրդը պատերազմական գործողությունները սկսվելու պահից ակտիվ եռանդ է հանդես բերում, կոմբարիլիա է ուղարկում իր գնդերը, որ միանան Գարիբալդիի բանակի՝ «Ալպյան որսորդը ըսված դյուցազնյա շահատակներու հետ»: Փառաբանելով վերջիններին, Ոսկանյանը այնուհետև գրում է. «Որսորդները մեծ մասով աղնվական և պատվավոր ընտանիքե են և հայրենական սուրբ սիրտ համար կկռվին: Մայր մը իր երեք որդիքը որսորդ ըլին է և իր բոլոր եկամուտը որսալու զենքի համար կնվիրե: Փափկասուն քույր մը իր ձեռքով բաներ է դրոշը, որ իր եղբոր հանձնվեր է: Բայց որ ավելի զարմանալի է, նաև երեկի անձեր, նշանավոր հեղինակներ իբրև պարզ զինվոր կժառանգեն հոն և հրանոթներով կվարժվին» (էջ 104):

Տպագրելով ռազմի դաշտ գնացող իր եղբոր համար դրոշ հյուսած աղջկա մասին հաղորդումը, Ոսկանյանը ծանոթագրությամբ հիշեցրել է Եղիշեի հայտնի խոսքերը՝ դրանք շրջադարձումով հղելով իտալացի կանանց. «Տիկայք փափկասունք Իդալիո աշխարհին, որք դրգյալք և գգվյալք էին...»: Ավելին. այդ հաղորդումը նա ելրափակում է այսպիսի բնորոշ վերջաբանով. «Ահա՛ ճշմարիտ հայրենասիրություն, և երբ հայերը կուգան անոր ասոր»:

¹⁰ «Արևմուտք», 1 հունվարի 1865, № 10, էջ 76:

¹¹ Մ. Նալբանդյան, Ելժ, հատ. 2, Երևան, 1947, էջ 261:

պ. Կոճիկյանին կամ պ. Ապիտոնիկին ազգասեր կրսեն, անհնարին է մեզի շփոթիլ և շարտմիլ»:

Մատնացույց անելով, որ իտալական ժողովուրդը տվել է քաջարի Գարիբալդին և խանդավառությամբ ներկայացնելով նրա կամավորների զոր-
ծողությունները, «որք այնքան դարմանք կուտան բոլոր եվրոպայի»՝ դյու-
ցազնաբար կատարելով «արյունարբու թշնամիի մը ուսը», Ոսկանյանը խո-
րագույն դառնությամբ էր արձանագրում, որ իր ազգակիցները համարվում
են վայրենի ցեղերի ուս: «Արևմուտքի» հենց հաջորդ՝ հուլիսի 15-ի համա-
րում «Մանր լուրերի» ու սլատերազմակուս հաղորդագրությունների «մեջ տե-
ղում», պատմելով Իտալիայի ազատագրության համար 1849-ին ցույցի ելած
Փարիզի ուսանողության շարքում իր զոհվելու մասին, Ոսկանյանը գրում է.
«Տասը տարի անցան և հիմա Իտալիա ո՛չ միայն կղարթնու, կկանգնի, ողի
կառնու և կկազդուրվի, այլև Հռոմայի մեկ մասը այնպիսի նորոգումներու
և օրենքներու սերմը կընդունի, որ շատ շերթար բարօրություն և ազատու-
թյուն պիտի բերե իրեն: Տասը տարի անցան և հայերը փոխանակ ուրիշ ազ-
գերը»¹² օրինակ առնելու և մեր փոքր, բայց հարատև ջանք՝ հասկնալու, սկսան
խորթալ և մեր ըսածները երազ սեպել» (էջ 132—133): Եթե նկատի ունե-
նանք արևմտահայ առաջադիմական զանգվածը, «Արևմուտքին» զաղափա-
րակից ընթերցողներին, ապա կարելի է ասել, որ Ոսկանյանի հանդեսի ցու-
նած հունդերը շմնացին առանց ծլարձակման... որքան էլ ինքը Ոսկանյանը
կարծում էր, թե քչերը հասկացան իր խոսքն ու նպատակը: Զեյթունի մոտեցող
ապստամբությունն ու հերոսամարտը դրա հաստատումն էին, իսկ զեյթուն-
ցիների դյուղաշրջությանը նվիրված Ոսկանյանի սրտաբուխ փառաբանությու-
նը՝ վկայությունն այն բանի, որ «Արևմուտքի» և նրա խմբագրի համար ազ-
գային-ազատագրական պայքարի ուղիների որոնումները տանում էին դեպի
«լեռնականը», որ «վիհերը կըթնդացնե իր վառողով... ազատության զինվոր
է... բռնավորության ոտքը կոտրած» է¹³:

«Արևմուտքի» էջերից «սաստիկ բառեր» հասցեագրելով Ավստրիային,
Ոսկանյանը դատապարտում էր բոլոր բռնապետությունները, ուրիշ ազգե-
րին, մանավանդ փոքր ազգերին տիրողներին, դրանց թվում առաջին հերթին
թուրքական բռնապետությունը, որն իր տիրակալությունն էր հաստատել
Արևմտյան Հայաստանում: Հանդեսը հասկացնում էր ընթերցողներին, որ
Թուրքիան Հայաստանի նկատմամբ կատարում է նույն դերը, ինչ կատարել է
Ավստրիան Իտալիայի հանդեպ: «Արևմուտքի» էջերում երբեմն այդ զաղա-
փարն այնքան պարզ էր հնչում, որ բավական էր «Ավստրիա» անվանումը
փոխարինել «Թուրքիայով», իսկ «Իտալացիների» փոխարեն կարդալ «Հա-
յեր», և պարզ կդառնար, որ մի շարք նյութերում «սաստիկ բառերն» ուղղված
են հենց Թուրքիայի ու թուրքական բռնապետության դեմ: Գործադրված
բռնությունը ոչ միայն քաղաքական իրերու վրա կծանրանար,— գրում էր
Ոսկանյանը,— ոչ միայն ազգությունը կսպառնար, ընտանիքը կվրդովեր,
մարդերը կհալածեր և կիները կմտրակեր, այլ մանկտին անդամ կուղեր ա-
սլականել ու դերությունը քրիստոնեական վարդապետության հետ անոնց

¹² Խոսքը հավասար չափով վերաբերում էր նաև հույներին, որոնց պայքարի օրինակը
և թուրքական լծից ազատագրվելիք նույնպես պրոպագանդել է «Արևմուտքը» 1859 թ.:

¹³ «Արևմուտք», 15 մարտի 1864, էջ 26:

սովորեցնել» (էջ 86—87)։ Հանդեսը ծաղրում, մերկացնում է ալստրիացիներին՝ ղինվորից մինչև թագավոր ու ղորապետ, հրապարակում է անմեղ մահապարտների ցանկը, դատապարտում պրոստիտուտական ղիրքորոշումը՝ մասնավորապես Անգլիայի հռչակած շեղոթությունը, որն «անկողմնակի կերպով Ալստրիային քաջալերություն» է տալիս։

«Արևմուտքում» իտալական ժողովրդի մղած ազատագրական պատերազմի լուսաբանման սեկտուն միտվածությունը պարզորոշ երևան է դալիս նաև այն վերաբերմունքի մեջ, որ նրա էջերում գրսևորվել է աղգային-ազատագրական պայքարի հերոսների նկատմամբ։ Պատերազմական առաջին իսկ լուրերում Ոսկանյանն իր ընթերցողներին է ներկայացրել իտալական հեղափոխական-դեմոկրատական շարժման առաջնորդներից մեկին, Իտալիան «ցածից» միավորելու պայքարի մարտիկ Գարիբալդին։ Հրապարակելով նրա հայտնի կոչը լոմբարդացիներին՝ «ով որ զենք մը կրնա առնուլ և շառնուր, ով որ կրնա շարժիլ և երևան շինել, մատնիչ է...» (էջ 90), հանդեսը նկատագրել է Գարիբալդիի «անակնկալ քաջությունները», շեշտել, որ նրա հրամանատարությամբ «անհնարը հնարին կրլի», որ ամենուր «ժողովուրդը, իր շունչը կղգա»։ «Արևմուտքում» Ոսկանյանը ղետեղել է Գարիբալդիի հակիրճ կենսագրականը (էջ 95—96)՝ նրա արիությունն օժելով ոչ այլ կերպ, քան «հայկական» ածականով, որով նրան մերձեցրել է հայ ընթերցողին։

Մյուս ժողովուրդների օրինակն արևմտահայությանը մատնացույց անելու խնդիր հետապնդելով, «Արևմուտքում» Ոսկանյանը, դարձյալ օգտվելով ալստրա-իտալա-ֆրանսիական պատերազմի ընթացքը լուսաբանելու առժամանակյա արտոնությունից, անդրադարձել է նաև հունգարական ժողովրդի մղած ազատագրական-հեղափոխական շարժմանը, նրա հերոսներին։

Գտնվելով Բրյուսելում, հավանաբար 1849-ին, «Արևմուտքի» ապագա խմբագիրը հանդիպում է ունեցել 1848—1849 թթ. հունգարական հնչափոխական շարժումների մասնակից մի հունգարացու հետ, որը Կոշուտի նախկին ղինվորներից է եղել։ «Այս թուրը Քոսսյուլ ինձ տվավ, կրսեի արի երիտասարդը, և ինքը միայն կրնա դայն ձեռքիս առնուլ» (էջ 104)։ Պատահաբար չէր ալղ հանդիպումը վերհիշում Ոսկանյանը։ Իտալիայի ազատագրության համար մղվող պատերազմը ոտքի էր հանել նաև հունգար հայդնապետներին, որոնց մասին Ոսկանյանն արտահայտվում է անսքող համակրանքով։

Նույնրան ջերմ է «Արևմուտքի» վերաբերմունքը ղեպի Հունգարիայի անկախության համար ղենքը ձեռքին մարտնչած «քաջ հայկադուն» էրնես կիշը (Քիշյան-Պատիկյան), որ «սպանվեցավ ղնդամահ» (էջ 95), մանավանդ ղեպի 1853—1856 թթ. ռուս-թուրքական պատերազմում մեծապես աչքի ընկած ղորավար Բարսեղ Բեհբությանը։ Դեռ 1855 թ. «Արևելքի» նույնմերյան համարում Ոսկանյանը գրում էր, թե «կփափագեինք, որ Ռուսիային ծառայելը մոռանալ չի տար՝ այս ընտիր և արի ղորակալին, թշվառ Հայաստանի պատիվը և շահը»¹⁴։ Նույն միտքը ղարգացնելով, Ոսկանյանը «Արևմուտքում» նկատում է, որ օտար երկրներում փառք վաստակած հայաղգիները պետք է «ամեն պաշտոն հանձն առնուն և վերջին հավատարմությամբ կատարեն»

¹⁴ «Արևելք», 1 նոյեմբերի 1855, № 9, էջ 286։

զայն», միաժամանակ ցավով արձանագրում, որ «Հայաստանի ժողովուրդը հյուղերու և փլատակներու մեջ կտապլտկի, զինակիր մը չունի, որ խժաբարո քյուրտերու բարբարոսությունը զսպե և քաղաքագետ մը չկա, որ իր գործերը վարե Եվրոպայի լուսավորության օրենքներու համեմատ» (էջ 35)։

Կարևոր է նկատել, որ «Արևմուտքում» ազգային գործիչներ, նրանց թվում նաև ռազմագետ և «զինակիր» պատրաստելու պահանջն առաջ էր քաշվում միավորվելու՝ «կռակ եղեք և զիրար պատսպարեցեք», գաղափարի պրոպագանդի հետ մեկտեղ։ «Որքան որ անմիաբան մնաք,— Լեւոնների խոսքերն ուղղակի հայ ընթերցողին է ուղղում Ոսկանյանը,— որքան որ անձնական հոգը միայն ունենաք՝ թշվառությունե, աղետքե և ճնշումե ուրիշ բան մը չեք կրնար հուսալ երբեք։ ...Տկարները ամեն վախե կրնան աղատիլ, երբ իրար սիրելով, ճշմարտապես կմիանան մեկզմեկու»։

Հանդեսի քարոզած այս գաղափարախոսությունն ուղիղ գծով գալիս մերվում էր ևս Աբովյանի մեծ գաղափարին, որ արտահայտված է գրողի հայտնի քառատողում և որը Ոսկանյանը բնաբան է դարձրել վիպասանին ու նրա «Վերքին» նվիրված հոգվածաշարի համար.

Վա՛յ էն աղգին, որ աշխարքումս անտեր ա,

Վա՛յ էն երկրին, որ թշնամուն գերի ա,

Վա՛յ էն խալխին, որ ինքն իր կյանքն, աշխարքը

Զի պահպանիլ ու հարամու ձեռ կուտա (էջ 54)։

Եզրահանգումն այն գաղափարախոսություն, որին ձգտում էր «Արևմուտքը» ազատագրական պայքարի իր ընդհանուր պրոպագանդով, այդ ընթացքում նաև Իտալիայի անկախության և միավորման համար մղված պատերազմի նպատակային լուսաբանումով, այն էր, որ ընթերցողը, ինչպես գրել է Ոսկանյանը «Վերք Հայաստանի» վեպը մեկնաբանելիս, համոզվի, թե «ժամանակը եկավ, որ հայ ռամիկն ալ զգա, որ իր ռամկությունովը մեծ բաներ կրնա ընել և ուրիշ ժողովուրդներե վար չմնար թե՛ ազգային և՛ թե օտարազգի բռնավորներու դեմ զինելու ատեն» (էջ 55)։

Հատկանշական է, որ «Արևմուտքի» խմբագիրն Իտալիայի ազատագրության համար մղվող պատերազմի ընթացքը լուսաբանելու արտոնությունն օգտագործել է լիովի և իր ազատագրական գաղափարախոսությունն արծալածելու համար ձեռքից բաց չի թողել նաև քիչ թե շատ հարմար առիթները։ Այդ առումով բնութագրական է Մետերնիխի մահվան կապակցությամբ գրված հոդվածը¹⁵։ Ոսկանյանը հակիրճ քննել է Մետերնիխի գործունեությունը, դատապարտել միահեծան տիրակալությունը, անսքող դրսևորել իր վերաբերմունքը. «Մենք, որ աղգերու իրավունքը և անկախությունը կսիրենք, մենք, որ աղգերու հավասարությունը կպաշտպանենք մարդկության մեջ,— ամենայն համարձակությամբ շեշտում է Ոսկանյանն «Արևմուտքում»,— կատենք Մետերնիխի դրությունը իբրև անհիմն և անիրավ քաղաքավորություն, և, կարծենք, պարտավորություն իսկ ունինք ատելու, վասնզի ողորմելի և կիսամեռ ազգի մը անդամ կգտնվինք այս երկրի վրա»։ Իտալիայի բռնակալը, շարու-

¹⁵ «Արևմուտք», 1 հուլիսի 1859, № 13, էջ 100—101։

նաև Կոմիտեի նախագահ Գաբրիելը, որ Իտալիայի սոսկ աշխարհագրական անուն չէ, որ նրա ժողովուրդը սրբում է «ավստրիական ստվերը» իր հայրենիքից, որտեղ նա «անմեղի ոսկր սերմանեց» և ուր «հասկամը չկա, որ նահատակի արյունով ոռոգված շրջալի»։ Հետաքրքրական է, որ Մ. Նալբանդյանը ևս նույնպիսի դատապարտություն է անդրադառնում Սեփերին խոսքերին. «Հնդհանրական և մասնավորապես ավստրիական բռնակալության ջերմեռանդ քուրմը հրատարակեց, թե «Իտալիան լույ աշխարհագրական անուն է», — գրել է նա և ապա նկատել «Արդյոք քավարանի մեջ Մետերնիկը կրկնում է՝ կոմս Քավուրին յուր խոսքը։ Պիոս իններորդին կրմնա պատասխանել»¹⁶։

Ահա թե ինչու պատերազմները դատակնիքով դրոշմող Ոսկանյանը 1859 թ. Ավստրիայի դեմ մղվող պատերազմը «Արևմուտքի» էջերում հայտարարում էր սուրբ պատերազմ, որը պետք է նպաստի Իտալիայի ազատագրությանը և Եվրոպայի լուսավորությանը։ Այդպիսով նա մի անգամ ևս շեշտում էր 1855 թ. «Արևելքում» արտահայտած այն գաղափարը, թե ամեն մի ազգ որևէ անգամ «իր արյունը թափելե և էությունը վտանգի մեջ դնելե ետև» չի մնա իր նախկին վիճակի մեջ։ Ուստի և, ինչպես տարիների առաջ, 1859-ին ևս գտնում էր, որ ազգը և ազգային գործիչները պարտավոր են «ապագայի վրա խորհիլ և զան պատրաստել իսկ»¹⁷։

Ստ. Ոսկանյանը փորձում էր հայ ժողովրդին նախապատրաստել այդ ապագայի համար՝ օգտագործելով այն սուղ հնարավորությունները, որ տվյալ դեպքում ընձեռում էր հանուն Իտալիայի ազատագրության մղված պատերազմը։

Սակայն այդ պատերազմն ավարտվեց հանկարծակի զինադադարով, հրք, իրոք, մոտեցել էր Իտալիայի իրական անկախության և ազատագրության ժամը, իր մեծ վերելքն էր ապրում ազգային-ազատագրական շարժումը։ Սեփական մեկնություններով և ֆրանսիական մամուլում ի հայտ եկած հոգևածների մասին հաղորդումներ տպագրելու միջոցով «Արևմուտքն» այդ առթիվ արտահայտեց իր տարակուսանքը («Մարդ չգիտե դեռ, թե ինչ անցավ հոն»), արտացոլեց իր դժգոհությունը կիսատ-պռատ հրովարտակներից, նույնիսկ ահազանգեց, որ վտանգը «նորեն պիտի խոշտանգե» Իտալիային, եթե աշակրջություն հանդես չբերվի (էջ 118)։ Նա ոգևորությամբ արձանագրեց լոմբարդիայի ձեռք բերած ազատությունը՝ միաժամանակ առաջ քաշելով հավասարություն հաստատելու անհրաժեշտությունը, խնդիր դրեց, որ «քաղաքական հավասարություն տրվի Իտալիայի ժողովուրդներու» (էջ 119)։

Իտալիայի ազատագրության առիթով առաջ քաշելով ազատության և հավասարության խնդիրը (իսկ դրանք, հանդեսի խմբագրի կարծիքով, առաջադիմության երկու թևերն էին), «Արևմուտքը» հետադաշում ևս վերադարձավ այդ պրոբլեմին, բայց արդեն Թուրքիայի սահմաններում ապրող ժողովուրդներին, նրանց շարքում նաև հայերին հավասարություն և ազատություն շնորհելու անհրաժեշտության պահանջով։

16 Մ. Նալբանդյան, Եժ, հատ. 3, Երևան, 1940, էջ 85։

17 «Արևելք», 1 հոկտեմբերի 1855, № 7, էջ 194։

**ОТРАЖЕНИЕ ИТАЛЬЯНСКОЙ ОСВОБОДИТЕЛЬНОЙ ВОЙНЫ
В ЖУРНАЛЕ «АРЕВМУТК»**

Кандидат историч. наук М. Н. АКОПЯН

(Резюме)

Непосредственный участник французской революции 1848 г., прогрессивно-демократический публицист Степан Восканян в 1859 и 1864—1865 гг. издавал в Париже журнал «Аревмутк» («Запад»), ряд номеров которого посвящен австро-итало-французской войне 1859 г. Пользуясь разрешением освещать ход войны, журнал косвенно выдвинул задачи национально-освободительной борьбы армянского народа, призывал к открытым выступлениям против турецкого режима. Пропаганда идей освободительной борьбы содержится как в материалах, освещающих освободительную войну итальянского народа, так и в ряде других статей, написанных Ст. Восканяном. Общий вывод этих материалов заключается в том, что армянский народ должен следовать примеру других народов, добивающихся свободы и независимости путем борьбы.